

տպարան Էջմիածնում, առաջին տպված զիրքը Տօնացոյցն էր: 1776 թ. հայ տպարան հիմնովեցաւ Տրիէստում, 1783 թ. Պէտէրբուրգում, 1790 թ. Նոր Նախիջևեանում, 1829 թ. Մօսկվայում, այլև Թիֆլիսում, Աստրախանում, Շուշում, Բագուում, Թէոդոսիայում, Բօսսօվում, Գանձակում, Երեւանում եւլն: Այս տպարաններից ամենանշանաւոր օգուտ եւ ծառայութիւն մատոյց հայ գրականութեանը Վենետիկ տպարանը, որ 1788 թ. Վենետիկ տեղափոխվեցաւ ս. Ղազարի վանքը: Իսկ ներկայումս Վեհ. Հայրապետի անդադար հոգացողութեամբ եւ ջանքով եւ մեծ. Պ. Սանասարեանի եւ մեծ. Պ. Յօնանեանի օժանդակութեամբ Էջմիածնի բոլորովին նորոգված տպարանը մեծ օգուտ եւ ծառայութիւն կմատուցանէ հայկական եկեղեցուն եւ ազգին:

Մ. Տ. Ա.

Գ Ա Յ Լ Ե Ր Ի Ո Ր Ս .

Բ Է Ն Է Դ Ի Կ Տ Ի Պ Ա Տ Մ Ա Ծ Ը .

Պետերբուրգում Ալստրիական դեսպանատան եղած ժամանակս կոմս Պօտօցկին ինձ իւր կալուածը հիւր հրաւիրեց, որը մայրաքաղաքից քսան ժամի ճանապարհ հետի է—գայլերի որսին մասնակցելու, որը մինչև այս ժամանակ ինձ բոլորովին անյայտ էր:

— Այն հնարը, որը մենք գործ ենք դնում գայլեր որսալու համար, ասաց ինձ կոմսը—ի հարկէ ձեզ բոլորովին անյայտ է, և այնտեղ զգացմունք զարթեցնելու բաներ շատ կտեսնէք, և կյուսամ որ ձեր աշխատութիւնը կվարձատրվի:

— Վարձատրութեան մասին խօսք չկայ, եթէ որ ձեր կալուածը գալով ինձ վայելչութիւն գտնեմ, պատասխանեցի ես—ես համոզված եմ, որ ձեզ պարտաւոր կմնամ իմ կեանքի մի քանի ամենալաւ ժամերս:

— Չմեռնային ամպամած և տխուր երեկոններից մինն էր, երբ ես կոմս կալուածը հասայ: Նա գտնվում էր մի բարձր տեղ, որտեղից աչքի առաջ բացվում էր ընդարձակ գաշտավայրը, որի վերջին ծայրում հեռու երեւում էր անտառ: Ստոցային հաստ կեղեք ծածկած էր գետինը, որը գայլերի որսին շատ նպաստում էր, որովհետեւ կոմսի խօսքով ձիերը չէին ընկնի, իսկ փխրուն ձիւնը նոցա կարգելէր արագութեամբ գնալու: Մեզանից ամեն մինը երկհրանի հրացան և հինգ հարիւր գնտակ առնելով, մենք—կոմսը, նորա մի բարեկամը և ես եռաձի սահնակի մէջ նստելով, ուղիւորվեցանք դէպի նշանակված տեղը: Սահնակը թեպէտ և մեծ չէր, այնուամենայնիւ երեք հոգու համար բաւականաչափ տեղ կար: Միջնակ ձին արագութեամբ էր սլանում, իսկ կողքինները թռչկոտումէին կատաղութեամբ. այս ձիերին կառավարելու և կառքը ընկնելուց պահպանելու համար հարկաւոր էր

այնպիսի մի կառապան, որը պէտքէ լինէր յաջողակ, փորձառու և սառնարիւն: Սահճնակի ընկնելը ինքն ըստ ինքեան անվնաս է, բայց վտանգաւոր է այն ժամանակ, երբ ճանապարհորդներին ետեւից բազմութեամբ վազուամբ քաղցած և կատաղի գայլեր:

Մենք մեզ հետ առած էինք մի խող, որը գայլերին հրապուրելուն պիտի ծառայէր: Վերջապէս հասանք նշանակված տեղը այն ժամանակ, երբ արեգակը մայր մտաւ և դուրս եկաւ լուսինը, լուսաւորելով ամբողջ ձիւնապատ դաշտավայրը: Խողի վրից մօտ ութ կանգուն երկարութեամբ պարան կայելով ձգեցինք սահճնակից դուրս, իսկ ձիերը սկսան արագութեամբ սլանալ ձիւնապատ դաշտի վերայ, որը ազամանդի նման փայլումէր: Երբոր խողը սկսաւ ճչալ, կոմնը ծիծաղելով դարձաւ դէպի ինձ և ասաց.

— Ձեզ ինչպէ՞ս է թուում այս խաղը, Բէնէդիկոտ:

— Ինձ աւելի հաճելի կլինէր հրացան արձակելու նպատակ ունենալ, պատասխանեցի ես ականջս փակելով — քան թէ այսպիսի մի զարհուրելի երաժշտութիւն լսել:

— Շուտով դուք ուրիշ երաժշտութիւն ևս կլսէք, պատասխանեց կոմնը:

— Գուք կարծումէք մի՞թէ, որ այս կերպով կարող ենք գայլերին հրապուրել:

— Մի կէս ժամ ևս սպասեցէք, և յետոյ ես պատրաստ եմ ձեզ հատուցանել ինչ որ կամենաք, եթէ որ այնուհետեւ պէտք կլինի ձեզ ոտով շրջելու:

Յետոյ խողի խոռովիչ ծիչը կարծես իմ հանգստութեան համար, փոխվեցաւ խղճալի հեծեծանքի:

— Ասումէք, ասաց յանկարծ կոմնը, երբ լսվեցաւ երկայն խուլ, մի առանձին տեսակ ոռնոց: — Մի՞թէ ես ճշմարիտ չասացի: Ահա մեր բարեկամի ճչի առաջին պատասխանը: Նայեցէք, ահա արդէն այս այն կողմից լսվումեն ոռնալու ձայներ: Գործը շուտով կսկսվի ահա և նորա:

Ես կոմնի ցոյց տուած կողմը նայելով նշմարեցի քանի մի սև շարժական կէտեր, բայց շուտով ամենայն կողմերից ևս սկսան երևիլ նոյնանման կէտեր: Սարսափելի ոռնոցը քանի գնումէր սաստկանումէր և մենք սպասումէինք, որ գայլերը շուտ մեզ մօտենան: Խողը շարունակումէր իւր ծիչը, իսկ գայլերը արդէն մեզ յիսուն քայլի չափ մօտեցած էին: Ըստ երևոյթին նորա սկզբում ահից երկար չէին մօտենում: Նոցա խումբը ամենայն վայրկեան աւելանումէր, այնպէս որ կարելի էր կարծել, թէ նորա մի գաղանի ոյժով գետնից բուսնումէին և դորա հետ միասին աւելանում էր նաև նոցա համարձակութիւնը: Նորա պակի մօտ էին գալիս, կրճտում էին ատամները, ոռնումէին, գոչումէին և խրտնեցումէին ձիերին, այնպէս որ մեր կառապանը ստիպված էր ձիերին թող տալ արագ գնալու:

— Այժմ սկսենք պարոններ, ասաց կոմնը — Աստուած յաջողէ մեր գործը:

Այս խօսքերը ասելով նա երկու գնտակ արձակեց կարգով փայլող աչ-

քերին: Մի խուլ ոռնոց լավեցաւ և գայլերից մինը սկտաւ երերալ և յետ մնալ: Իսկ միւսները երեւի հրապուրված լինելով արիւնի հոտից, կատաղութեամբ իւրեանց ընկերի վերայ յարձակվելով պատառոտեցին և աննկարագրելի արագութեամբ նորան լափեցին: Երկու վայրկեանից յետոյ քաղցած զազանները խոնվումէին մեր շուրջը, ինչպէս առաջ: Հրացան արձակելու կարգը իմն էր, ես ևս մինին զլորեցի ցած, սորան ևս միւսնոյն վայրկեանին պատառոտելով լափեցին: Հրէշները դարձեալ սկսան մեր ետեւից վազել, բայց այս անգամ աւելի շատ էին: Նոցա թիւը զարմանալի արագութեամբ աւելանումէր: Մենք մի ժամի շափ սկսանք այնքան յաճախ հրաձգել, որքան արագութեամբ կարողանումէինք հրացանը լցնել: Բայց հազիւ թէ ընկնումէր մի գայլ, որ նորա տեղը երեւումէր ուրիշ հինգ վեցը:

Նորա իւրեանց բազմութեանից և արիւնի հոտից գրգռվելով, այնքան համարձակութիւն առին և կատաղեցան, որ խոնվումէին մեր սահնակի շուրջ և մենք կարող էինք ձեռով դիպչել: Իսկ առաջինները աշխատում էին խողին բռնել, որին մենք աղաւթումէինք գիշատիչների սուր ատամներից:

Մինչև այժմ հրաձգութեամբ պարապելով և սաստիկ տաքացած լինելով, մենք մեր վտանգաւոր դրութեանը ուշք չէինք դարձնում: Բայց այժմ իմ մէջ մի անհասկացութիւն տիրապետեց: Արդեօք ե՞րբ և որտեղից հաւաքվեցաւ այս խուռն բազմութիւնը, և ե՞րբ կզագարի բազմանալուց: Աարծնս ամբողջ Ռուսիայից այստեղ են ժողովվել գայլերը: Հօտը բազկանումէ սովորաբար քանի մի հարիւրից: Իսկ այս ահագին հօտը գուցէ բովանդակումէր հազարը, և ս՛ գիտե՞ գուցէ հինգ անգամ աւելի ևս: Նորա կիսալուսին էին կազմում, որի կես կողմը օւղղված էր դէպի խողը, իսկ երկու թևերը օւղղված էին ձիերի շարքով, որոնք իւրեանց ահից փնջումէին: Սոցա միմիայն մեր կառապանի յաջողակութիւնը կարող էր երասանակներին հպատակեցնել: Այս մի վայրենի և հիանալի տեսարան էր, ոպառնալից և միւսնոյն ժամանակ վսեմ: Արացած լուսինը երևումէր պայծառ երկնքի վերայ, մեր շուրջը, որքան կարելի էր տեսնել, ընդարձակ դաշտավայրը կաթի նման սպիտակ ձիւնով ծածկված, որը փայլումէր և ցոլում, իսկ տեղ տեղ ևս ծածկված էր դիւրաբեկ սառցային կեղեւներով, որոնք ձիերի պայտերի տակ կտորատվելով շատրվանի խոնաւ փոշու նման էին բարձրանում, առաջից կրակ դարձած կռածին, իսկ ետեւից, աջ և ձախ կողմից գայլերի անթիւ բազմութիւնը, որոնց աչքերը հրաշէկ ածուխների նման փայլումէին, իսկ մենք սահնակի մէջ կեցած հրացան էինք լցնում և արձակում, կոմը ետեւ, իսկ նորա բարեկամը և ես աջ և ձախ կողմեր:

Ես յիշեցի որ իմ մէջ վախ ընկաւ, ես տեսնումէի որ, որեւիցէ վտանգի մէջ, օրինակ եթէ սահնակը շրջի և կամ ձիերից մինը ընկնի, փրկութիւնը անհնար էր: Բայց ես աշխատումէի որքան կարելի էր ընկերներիցս պահել իմ ահը, որոնց նոյնպէս միւսնոյն փորձանքն էր սպասում: Բայց այնուամենայնիւ մեր վտանգը ամեն մի վայրկեան աւելանումէր, որովհետեւ գայլերի թիւը քանի գնումէր շատանումէր: Ես վերջապէս մի

սրտնեղութիւն զգալով, ասացի կոմսին.

— Այս արեւարբու գաղանները մեզ սաստիկ նեղումեն:

— Այո, դուք ճշմարիտ էք ասում, ես ևս չեմ հաւանում, ասաց նա, յետոյ մի վախեցած հայեացք ուղղելով ձիերի վերայ, նա ասաց կառապանին. — դէհ, ի՞նչ կասես, Պօղոս:

— Ձիերին կառավարելը շատ դժուար է, կոմս:

— Ի՞նչ ես կարծում, արդեօք մեզ վտանգ է սպառնում:

— Լաւ չէ, կոմս, որ այս թշուառները այսքան մօտենումեն:

— Այո, այդ ես ևս չեմ հաւանում, կարծումեմ որ վատ չի լինի, եթէ որ առաջինների վերայ հրացան արձակենք:

Աոմսի խորհրդին հետեւելով, մենք կրակը ուղղեցինք կիսալուսնի թեւերի վերայ. Թէպէտ ամենառաջին գայլերը շուտով սպանվեցան և ցրվեցան և մենք մինչև այն սաստիճան աշխատումէինք, որ մեր հրացանների բերանները տաքացան, այնուամենայնիւ ես չէի նկատում որ մեր գործը առաջ գնացած լինէր. Թէպէտ մենք երբեմն թշնամու անընդհատ կարգը քանդումէինք և խանգարումէինք, բայց այնուամենայնիւ այս մեզ շատ քիչ էր օգնում, և նորա անվահերութեամբ մօտենումէին մեր սահակին:

— Բարեկամներ, բացազանչեց կոմսը, և նորա ձայնի մէջ երևումէին երկիւղի նշոյլներ— հարկաւոր է իսկոյն վտանգից ազատվելու հնար գրտնել, ապա թէ ոչ, կորած ենք. Մեղանից իւրաքանչիւրը մօտ երեք հարիւր գնտակ արձակեց, և եթէ որ երկու գնտակը մի գայլ սպանէր, մենք հարիւր գայլ սպանած կլինինք, բայց դեռ ևս մեր հաւ համար գնտեր կան, եթէ մի փոքր անբաղդութիւն պատահի— մենք նոցա զօհ կլինինք: Դէհ, կտրիճ Պօղոս, քեզ տեսնեմ թէ ինչպէս պէտքէ վտանգից ազատես:

— Թէ որ ձիերին դէպի ձախ դարձնենք, նոքա կխառնվին և ետ կմնան:

— Գու ձիերի վերայ յոյս ունիս արդեօք:

— Այո, յոյս ունիմ:

— Իսկ սահակի վերայ:

— Ես կանեմ միմիայն այն ինչ որ կարելի է, կոմս. իսկ մնացածը Աստուծուց յուսանք: Թէ այսպէս և թէ այնպէս կարող ենք փոքր ինչ վտանգից ազատվել. իսկ առաջ քշել պէտք չէ:

— Ինչպէս կամենումես արա, միայն մեզ վտանգից ազատիր. թէ որ մեզ անվնաս տուն հասցնես, քեզ լաւ կվարձատրեմ:

Հետեւեալ տաս վայրկեանը ոչ երբէք իմ մտքից պիտի անցնեն. Պօղոսը շարժեց երասանակը, մի տեսակ վայրենի կերպով սուլեց և մեր աչնիւ ձիերը, որոնք նոյնպէս դժուարութեան մէջ էին, քամու պէս սլացան: Ես իմ շունչը պահում էի, որովհետեւ կատարելապէս զգումէի, որ խնդիրը կեանքի և մահի վերայ էր: Քամին ձիւնը պտոյտ տալով մեր երեսներին էր խլփում, ձիերի արագ գնալը մթնեցնումէր մեր աչքերը, իսկ փոքրիկ սահակը փայլող ձիւնի մակերևոյթի վերայ նետի արագութեամբ սլանումէր:

ծովի փրփրած ալիքների վերայ, տառանջող նաւակի նման: Եւ աչքերս ուրիշ տեղ չէի դարձնում՝ բացի մեր ետեւից վալըզ գայլերի մութ խումբերի բազմութենից և պարզ տեսնումէի նոցա բորբոքված լողորկերը և կրակոտ աչքերը: Աննկարագրելի ուրախութեամբ ևս սուսայ թէ ինչպէս մեր և գայլերի մէջի տարածութիւնը, թէ և հանդարտ կերպով բայց հնազանդ մեծանումը: Եւ միայն մտածումէի նորա մասին, թէ մեր գործը կ'աջողուի եթէ որ ձիերը շարունակեն իւրեանց արագութեամբ գնալը և մեզ մի սր և իցէ անբաղդութիւն չպատահի: Եւ կիւղը ճնշումէր մեր շնչառութիւնը և սահնակի մջ ոչինչ ուրիշ ձայն չէր լսվում՝ բացի կատապա ի ձիերին խրատուսարար սուլելուց: Զիերը դարձան դէպի ձախ այնպէս որ գայլերի ձախակողմեան կիսաշրջանը ետ մնաց: Մեր կատաղի հալածիչները մեր կողքի դառնալը տեսնելով մի քանի վայրկեան շփոթմեցան և խառնակեցան երկիւղից և տարակուսանքից: Նոցա խիտ կարգը ցրվեցաւ իսկ մենք մեզ համար բացված ձանապարհով սկսանք առաջ գնալ, ժամանակ գտնելով: Մինչդեռ նոցա դարձեալ կարգաւորվումէին յարձակման համար, մենք սլացանք ուրիշ ուղղութեամբ, իսկ գազանները բարձր և վայրենի գոչմամբ սկսան մեր ետեւից ընկնել, բայց մեր թեւաւոր ձիերը բոլոր ոյժով գնումէին և սակաւ առ սակաւ մեր և նոցա մէջի տարածութիւնը առաւել մեծանումէր: Ահ, ևս ինչպէս օրհնումէի այս պատուական ձիերին իմ սրտի խորքից, որոնք իւրեանց հսկայական ոյժերը չէին խնայում մեր փրկութեան համար:

— Անցցեալ գոչեց վերջապէս կոմսը, որի ձայնը պարզութեամբ դուրս թուա թնթեացած կուրծքից: — Անցցես դու, իմ քաջ Պօղոս: Եւ յս զիշերը քեզ կ'իշխեցնեմ ամբողջ կեանքումը:

Բայց նորա ուրախ ձայնը յանկարծ ընդհատվեցաւ սարսափի աղաղակով: Ձիերի մինը ընկաւ և քիչ էր մնում որ միւսներին ևս իւր հետ քաշէր: Բայց ազնիւ կենդանին կարծես հասկանալով թէ իւր անկումը մեզ մահ է սպառնում սաստիկ ուժգնութիւն բանեցրեց, ուրի վերայ թուա և դարձեալ սկսաւ նետի արագութեամբ գնալ — փառք Աստուծուն — այս անգամ աւելի յաջողութեամբ ապա թէ ոչ — ևս կարողանալու չէի գրել այս պատմութիւնը: Այս ժամից յետոյ արևնարբու գազանները մեղանից շատ հեռու էին և դարձեալ մի ժամից յետոյ կոմսի տուը մեզ ընդունեց իւր գրկախառնութեամբ, ուր մենք փառք տուիք Աստուծուն իւր արած ողորմութեան համար: Միւս օրը մենք միևնոյն ձանապարհով գնացինք ձիւնով ծածկված գաշտափայրով և քանի մի ժամի ձանապարհի վերայ մենք տեսանք գայլերի ցիրուցան եղած ոսկրները, որոնց մենք սպանած էինք ինձ համար արժանաշիշատակ նախընթաց երեկոյին:

Մ. Գ.